

Ոստիկանությունն ակտիվիստների դեմ՝ Վարչական դատարանում



Ակտիվիստ Վահագն Մինասյանը ոստիկանության կողմից բերան ենթարկվելու պահին, լուսանկարը՝ aravot.am-ի



Փաստաբան Տիգրան Սաֆարյանը, լուսանկարը՝ advocates.am կայքից

Հուլիսի 10, 2014թ.

Վարչական դատարանում այսօր՝ հուլիսի 10-ին, տեղի ունեցավ 2013թ. ամռանը տրանսպորտի թանկացման դեմ պայքարից հետո Երևանի քաղաքապետարանի դիմաց նստացույց անող ակտիվիստների դեմ ոստիկանության ներկայացրած հայցերի քննությունը:

Չնայած որոշակի փաստական հանգամանքների տարբերություններին՝ քաղաքացիների դեմ ոստիկանության ներկայացրած հայցերի բնույթը նույնն է՝ ոստիկանի օրինական պահանջը չկատարելը, իսկ քաղաքացիները ոստիկանության դեմ ներկայացրած հակընդդեմ հայցով պահանջում են ոստիկանության գործողությունները ճանաչել ոչ իրավաչափ:

Քաղաքացիական ակտիվիստ Վահագն Մինասյանի գործով վարույթի քննությունն այսօր ավարտվեց, և հուլիսի 25-ին դատավոր Արման Թովմասյանը կիրապարակի վճիռը: Վահագն Մինասյանի շահերի ներկայացուցիչ փաստաբան Տիգրան Սաֆարյանը Միվիլենթի հետ զրույցում ասաց, որ եթե դատարանը իրավական մոտեցում ցուցաբերի գործին, ապա պետք է ոստիկանության հայցը մերժվի:

«Մենք այսօրվա դատական նիստի ընթացքում վկայակոչեցինք արդեն օրինական ուժի մեջ մտած վարչական դատարանի մեկ այլ վճիռ ,րով նույն օրը Վահագն Մինասյանը նույն գործողությունները կատարելու մեղադրանքով տարվել էր ոստիկանության կենտրոնականի բաժին: Այնտեղ նրա նկատմամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություն էր կազմվել իբրև թե ոստիկանի օրինական պահանջը չկատարելու համար և այդ գործով մենք նորից վիճարկում էինք ոստիկանների գործողությունները և խնդրում էինք ոստիկանների գործողությունները ճանաչել ոչ իրավաչափ, այսինքն՝ մենք արդեն ունենք օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, որով ըստ էության նույն փաստական գործողությունները կատարելու մեղադրանքով վարչական դատարանը մերժեց ոստիկանության հայցը և բավարարեց մեր հակընդդեմ հայցը՝ ճանաչելով ոչ իրավաչափ ոստիկանների գործողությունները նաև արձանագրելով անձնական ազատության և անձեռնմխելիության, խաղաղ հավաքների ազատության իրավունքի խախտում: Այսինքն՝

դատական օրենսգրքի 15-րդ հոդվածը կիրառելով՝ վարչական դատարանը այլ ելք չունի ուղղակի, քան հենց հղում կատարելով արդեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտին, նորից մերժի ոստիկանության դատական ակտը և բավարարի մեր հակընդդեմ հայցը»:

Հիշեցնենք, որ 2011թ. օգոստոսից Վահագն Մինասյանը և մի քանի այլ քաղաքացիներ Երևանի քաղաքապետարանի դիմաց անցկացնում էին նստացույց՝ պահանջելով Երևանի քաղաքապետարանի տրանսպորտի վարչության պետ Հենրիկ Նավասարդյանի և «Երևանտրանս» ընկերության տնօրեն Միսակ Համբարձումյանի հրաժարականը: Նստացույցի շուրջ երեք ամիսների ընթացքում Վահագն Մինասյանին, Գոռ Առաքելյանին, Սուրեն Սահակյանին և նստացույցի այլ մասնակիցների հաճախ բերման են ենթարկում հիմնականում ոստիկանության օրինական պահանջը չկատարելու մեղադրանքով: Ուշագրավ է, որ ըստ փաստաբան Սաֆարյանի ակտիվիստների նկատմամբ ամբողջապես նույնանման դեպքերի վերաբերյալ վարչական դատարանը կայացնում է միանգամայն տարբեր վճիռներ:

«Մենք ունենք երկու ակտիվիստի նկատմամբ վարչական գործ դատարանում նույն գործողությունները կատարելու համար: Նրանք, բողոքելով ոստիկանության ապօրինություններից, որ հանել էին նրանց փողոց էին իջեցրել, ուղղակի փողոցի ավտոկայանատեղու հատվածում երկու ավտոմեքենայի մեջտեղն ընկած հատվածում պռկել էին գետնին և բռնվել էին մեքենայից, որ իրենց նույնպես չտանեն ոստիկանություն: Նրանցից մեկի գործով դատարանը մերժեց ոստիկանության հայցը, բավարարեց մեր հակընդդեմ հայցը, դա արդեն օրինական ուժի մեջ մտած է, իսկ երկրորդի դեպքում վարչական դատարանը բավարարեց ոստիկանության հայցը, մերժեց մեր հակընդդեմ հայցը»:

Այսօր վարչական դատարանի նիստի ժամանակ ակտիվիստների շահերի ներկայացուցիչ Արտակ Զեյնալյանը միջնորդեց դատարանին գնահատական տալ ոստիկաններից մեկի հնչեցրած այն հայտարարությանը, որ քաղաքացիները պարտավոր են կատարել ոստիկանների ցանկացած պահանջ և միայն դրանից հետո բողոքարկել:

«Ոստիկանութիւնը էդ իրենց մեկնաբանությամբ, որ եթե ոստիկանությունը պահանջում է, որեմն դու պետք է կատարես, այսօր դատարանում ոստիկանության ներկայացուցիչը նշեց, եթե համաձայն չես գնաս բողոքարկես, դա իրավական պետության հետ, իրավունքի գերակայության հետ որևէ աղերս չունի: Ոստիկանության ցանկացած պահանջ ենթակա չէ կատարման, ենթակա է կատարման միայն օրինական պահանջը»:

Տե՛ս ավելին՝

<https://www.youtube.com/watch?v=QcQe4v6BNxk>